

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 90-  
ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐԿԱԾ ՊԱՏԱՆԵԿԱՆ 1 -ԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով

**Կարգադրում եմ՝**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական մարմնի հիմնադրման 90-ամյակին նվիրված պատանեկան 1-ին ամառային մարզական խաղերի տարածքային և մարզային փուլեր կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական մարմնի հիմնադրման 90-ամյակին նվիրված պատանեկան 1-ին ամառային մարզական խաղերի մարզային փուլ կազմակերպելու և անցկացնելու մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական մարմնի հիմնադրման 90-ամյակին նվիրված պատանեկան 1-ին ամառային մարզական խաղերի տարածքային և մարզային փուլեր կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ Ս. Յոզղալյանին՝ միջոցառումների անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն կարգադրության և միջոցառման կանոնակարգի առաքումը մարզի քաղաքային համայնքներ:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Մելքոնյանին՝ ապահովել տարածքային և մարզային փուլերի մրցումներին մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի քաղաքային համայնքների ղեկավարներին՝ ապահովել մանկապատանեկան մարզադպրոցների ակտիվ մասնակցությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական մարմնի հիմնադրման 90-ամյակին նվիրված պատանեկան 1-ին ամառային մարզական խաղերի տարածքային և մարզային փուլեր մրցումներին:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից: